ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 24-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի N 8-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները և ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի ապրիլի 20-ի «Դեպքի վայրը պահպանելու պարտականություն ունեցող ոստիկանության ծառայողների պաշտոնների ցանկը հաստատելու և ՀՀ ոստիկանության պետի 22.10.2018թ. թիվ 3377-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 8-Լ հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) դեպքի վայրը պահպանելու պարտականություն ունեն դեպքի վայրում հայտնված կամ ծառայողական պարտականությունների բերումով դեպքի վայր մեկնած օպերատիվ խմբի կազմում ընդգրկված ոստիկանության ծառայողները, ինչպես նաև ոստիկանության ստորաբաժանման ղեկավար կազմից պատասխանատու հերթապահը և ոստիկանության իրավասու ստորաբաժանումների ղեկավարները:»:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ***Վ.ՂԱՋԱՐՅԱՆ***

«25» ----------07----------2022թ.
ք. Երևան